

Հարգելի պարոն Երիցյան.

Ի պատասխան Ձեր 21.11.2019թ. հ.448 գրության՝ տեղեկացվում է, որ Երևան քաղաքի ստորգետնյա հետիոտնային անցումներից հենաշարժողական խնդիրներ ունեցող մարդկանց համար հարմարեցված է միայն Իսահակյանի արձանի հարևանությամբ գտնվող ստորգետնյա անցումը՝ «SAS» սուպերմարկետի կողմից:

Տեղեկացվում է նաև, որ Երևանի զարգացման ծրագրերի նախագծերով նախատեսվում է.

1.«Երևանի զարգացման ծրագրերով և մասնավոր հատվածի հետ համագործակցության արդյունքում հենաշարժողական խնդիրներ և սահմանափակ կարողություններ ունեցող քաղաքացիների համար մատչելի պայմաններ ապահովելու, նրանց տեղաշարժը դյուրին և ապահով դարձնելու նպատակով մայրաքաղաքի փողոցների խաչմերուկներում, բանուկ մասերում, հասարակական վայրերում և հանգստի գոտիներում կառուցվում են թեքահարթակներ:

Թեքահարթակի կառուցման անհրաժեշտությունը՝ որպես պարտադիր պայման նշվում է բազմաբնակարան, բազմաֆունկցիոնալ և հասարակական տիպի շենքերի նախագծային աշխատանքների համար տրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքներում, իսկ օբյեկտների շինարարական աշխատանքների ավարտից հետո, հանձնաժողովի կողմից կազմված հանձնման-ընդունման, հետագայում նաև փաստագրման ակտերը հաստատվում են միայն թեքահարթակների առկայության դեպքում:

Թեքահարթակների կառուցման տեղերը որոշելու նպատակով քննարկումներ են անցկացվում հաշմանդամություն ունեցող անձանց շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ:

2.Մայրաքաղաքի փողոցների մի շարք հասցեներում տեղադրվել են նախագուշացնող ռելիեֆային բետոնե սալիկներ և հատուկ ձայնային ազդանշան տվող լուսացույցներ: Ծրագրերը շարունակական են:

3.Նախատեսվում է Երևանի հասարակական տրանսպորտի նոր երթուղային ցանցի և միասնական տոմսային համակարգի ներդրում. նոր քաղաքային ավտոբուսների (հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված) ներկրման գործընթացի իրականացում:

Ներկա դրությամբ «ԼԻԱԶ» մակնիշի տրոլեյբուսներից 2-ը կահավորված է թեքահարթակով՝ հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար: «ՀԻԳԵՐ» մակնիշի ավտոբուսներից 25-ը կահավորված են հատուկ վերելակային հարմարանքով՝ հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար: Տեղադրված վերելակային հարմարանքներից թվով 15-ը ներկայումս անսարք վիճակում են: «ՀԻԳԵՐ» մակնիշի թվով 128 ավտոբուսների ուղեսրահներում կույր հաշմանդամություն ունեցող անձանց տրանսպորտից օգտվելու մատչելիության ապահովման նպատակով տեղադրված են կանգառների անվանման ավտոմատ հայտարարման սարքեր, որոնցից 77-ը գտնվում են անսարք վիճակում:

4. Երևանի քաղաքապետարանի դպրոցներում համընդհանուր ներառականության համակարգի ներդրում:

Ծրագրի շրջանակում «Հուլիսի կամուրջ» ՀԿ-ի համագործակցությամբ իրականացվելու են հանրակրթական դպրոցների ուսուցիչների՝ ներառական կրթության տեսության և կիրառման հարցերով վերապատրաստումներ:

Դպրոցները կունենան ուսուցչի օգնականներ:

Նախատեսվել է դպրոցների սանհանգույցների հարմարեցում, դպրոցների՝ թեքահարթակով ապահովում:

Դպրոցների վերանորոգման ծրագրերում ներառված է շենքային պայմանների համապատասխանեցում հատուկ կարիքներով երեխաների պահանջներին:

Միաժամանակ տեղեկացվում է, որ 20 վերելակների փոխարինման պիլոտային ծրագրով տեղադրվելիք վերելակները հարմարեցված են լինելու հաշմանդամություն ունեցող անձանց համար: Այս պարտադիր պայմանը դրվելու է նաև Երևան քաղաքի վերելակների փոխարինման համալիր ծրագրի իրականացման ընթացքում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ